

Ժաւորներուն բանեցուցած կանթեղներուն բոցէն յանկարծ կը բռնկի, և ընդարձակիլ ուզելով՝ ածխահանքին մէկ դին մէկալ դին կը ճաթեցընէ. ահով գործաւորներուն որը փլածներուն տակը մնալով կը մեռնի, որն ալ ան բռնկած կազէն կ'այրի կը մրկի՝ 1) Լստի հարկաւոր էր նոր տեսակ լապտեր մը շինելու, որ չկարենայ կազը բռնկեցընել, ու աս ամէն խեղճութեան դիմացը առնուի:

Երկու անգղիացի բնալոյծներ դիտեր տեսեր էին, թէ՛ որ և իցէ բռնկած կազ բարակ խողովակի մէջէն չկրնար անցնիլ. նմանապէս թէ որ ճրագի բոցին վրայ մետաղի կտոր մը կամ թել բռնենք, բոցը իր տաքութիւնը շատ մը կը կորսնցընէ. անոր համար կը սկսի չափէն աւելի ծուխ հանել: Եւ պատճառաւ է որ եթէ երկաթի թելէ հիւսած ցանց մը բռնենք բոցին վրայ բոցը չկրնար ցանցին ծակերէն անցնիլ: Լստի աս սկզբանց վրայ շինեց Տեւի բնալոյծը իր ապահովութեամբ լապտերը՝ 2) Եւ յիշեն պողպատ թելէ հիւսուած ցանցով մը պատեց բոցին չորս դին. աս բանս աղէկ յաջողեցաւ, և հիմա ամէն ածխահանքերու մէջ աս կերպով շինուած լապտեր կը բանեցընեն: 3) Եւ ան զի թէպէտ և ցանցին տակի կազը բոլորովին ալ բռնկի, չկրնար բոցը դրսի կազը բռնկեցընել, վերի ըսուած պատճառին համար: Եւ լապտերը կրնայ գործածուիլ նաև տնական բաներու մէջ, ինչպէս ցորեննոցները, մարագները, ածխանոցներն ու գինետունները մտնելու ատեն. վերջապէս ուր որ այնպիսի նիւթեր դրուած են՝ որ կրնան դիւրաւ բռնկիլ:

Պարոն Տիւմէնիլ՝ անունով գաղղիացին 1834^{ին} հնարեց ուրիշ տեսակ լապտեր մըն ալ որ 1837^{ին} Վաղղիացոց ձեմարանը ընդունեցաւ: Եւ կայ հաստ ապակիէ գլան մըն է՝ տա-

սը կամ տասուերկու հատ երկրթէ հաստ թելերով պատած: 4) արի կողմը երկու հատ կոնոնաձև ծակ կայ՝ մետաղէ ծածկութեով. աս ծակերէն կը մտնէ օդը լապտերին մէջ, իսկ բոցը ծխնելու զի պէս խողովակէ մը դէպ ՚ի վեր կը բարձրանայ, և ան խողովակին վերի ծայրը մետաղէ ծածք մը կայ՝ քովերը բաց: 5) ապտերը աս կերպով շինուած ըլլալուն համար, օդը սաստիկ յորձանքով մը վարի ծակերէն ներս կը մտնէ անդադար ու խողովակին վերի կողմէն դուրս կ'ելլէ: Լստի երբոր ջրածին ածխուտ կազը լապտերին մէջ բռնկի, մէկէն կը սկսի լապտերին ապակին սաստիկ ցնցուելով քովի երկաթներուն զարնուիլ. և ան ձայնը այնչափ զօրաւոր է որ գործաւորները հեռուէն ալ կը լսեն, վրայ կը հասնին ու կը մարեն:

Նոտէր - Բրիտանիայի Զարգացող Դէպքեր:

Եւս լիպրէ սև սապոնը ութը լիպրէ ջրի մէջ հալեցուր, ու պզտիկ աւելով մը մէկտեղ ժողովուած թրթուրներուն վրայ սրսկէ. իսկ թէ որ մէկտեղ չեն, բոլոր ծառին վրայ ցանէ ան ջրէն. որդերն որ աս ջրով կը թրջուին՝ կը մեռնին. միայն թէ քանի մը անգամ կրկնելու է գործողութիւնը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՏԱԳՐՈՒԹԻՒՆ

Եւսիւնի - Եւսիւնի աշխատանքները:

ԻՏԱԼԻԱՅԻՆ զարմանալի շէնքերուն մէջ խիստ անուանի են նաև աս երկու ծուռ աշտարակները Պոլոնիա քաղաքը: Եւսնց մէկը որ Եւսիւնի կ'ըսուի, ու Եւսիւնի աշտարակները շէնքերէն

1 Տես Ա հատոր, Երես 178:

2 Գ. Լ. Lampe de sureté.

3 Du Mesnil.